



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ս. ՄԻՆԱՅԱՆ

«10» 02 2017 թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 12

Ձեռնարկողը՝

<<Մխիթար պապիի թոռնիկներ>> ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Կաթավաճոր, 1-ին փող. 35 շենք

Գործունեությունը՝

**Ակունքի փուֆի հանքավայրի շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
ՀՀ Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿԻ
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԲՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅԱՆ

քիվ ԲՓ 12

«10» 02 2017թ.

«Արագածոտնի մարզի Ակունքի տուֆի հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն»

Ձեռնարկող՝	«Մխիթար պապիի թոռնիկներ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախագծային փաստաթղթեր, ՇՄԱԳ հաշվետվություն. /Ա կատեգորիա/
Նախագծող՝	Ի. Վարդանյան

Ակունքի տուֆի հանքավայրը գտնվում է «Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում և տեղակայված է Կարմրաշեն համայնքի վարչական սահմաններում: Թալին քաղաքի հետ հանքավայրը կապված է մոտ 4կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով: Մոտակա բնակավայրերն են՝ Կարմրաշեն, Ակունք և Եղնիկ գյուղերը, որոնց հեռավորությունը հանքավայրից 2-4կմ է: Վերազանցող բարձունքները տարածքում հանդիսանում են Արտենի և Արագած լեռան ստորոտները 2400-2040մ բարձրության նիշերով:

Լեռնակառուցվածքային տեսակետից շրջանը լեռնային է, համեմատաբար հանգիստ ռելիեֆով: Շրջանի հիմնական ջրային միավորը Սելավ Մաստարան է՝ Սևջուր գետի աջ վտակը, որի սնուցումը գերազանցապես անձրևային է:


Կլիման տարածաշրջանում չոր ցամաքային է: Նվազագույն ջերմաստիճանը կարող է հասնել -38°C, իսկ առավելագույնը՝ +34°C և ավել: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 400-1000մմ:

Տարածաշրջանում տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է և բնական շինանյութերի լեռնահանքային արդյունաբերությունը: Շրջանը հարուստ է հրաբխային ծագման շինանյութերի (տուֆ, բազալտ, պեմզա, պեռլիտ, հրաբխային խարամ) խոշոր պաշարներով:

Հանքավայրի տարածքը գուրկ է անտառային և բուսական ծածկույթից, շինարարական կառույցներից և ճարտարապետական կոթողներից: Տարածված են չոր տափաստանային գոտուն հատուկ շագանակագույն հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%: Հանդիպում են նաև ավելի թեթև ու ծանր մեխանիկական կազմով հողեր:

Բուն հանքավայրի տարածքում «կենդանիների և բույսերի Կարմիր» գրքում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Մարգարիտ Եղիշյան *Սեդրակ Գրիգորյան*



Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են երիտասարդ հրաբխային առաջացումները, որոնք ներկայացված են վերին պլիոցենային անդեզիտաբազալտներով և միջին չորրորդականի դացիտանման տուֆերով, արթիկյան տիպի տուֆերով, պիրոկլասիկ տուֆերով: Տուֆերը ներկայացված են մանրածակոտկեն, ծակոտկեն, չեչոտ տարատեսակներով: Գույները նույնպես տարբեր են՝ վարդագույն, մանուշակագույն, կարմրագույն, շագանակագույն:

Հանքավայրի պաշարները հաստատվել են «Հայերկրաբանություն» ԱՄ ՊՏՀ 30.12.1991թ. թիվ 348 արձանագրությամբ, ըստ A-1499.0հազար մ³, B-3256.0հազար մ³, C-5287.0 հազար մ³ կարգերի: Մակաբացման գործակիցն է 0.078:

Բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերը հետևյալն են.

- առավելագույն երկարություն՝ 510մ,
- առավելագույն լայնություն՝ 300մ,
- մշակման խորություն՝ 48.3մ,
- հաշվեկշռային պաշարները՝ 1875 հազար մ³
- բացահանքի օտարման մակերեսը՝ 12.1հա:

Բացահանքի ծառայման ժամկետը 50 տարի է:

Ելնելով հանքավայրի կլիմայական, լեռնատեխնիկական պայմաններից և համաձայն շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման տեխնոլոգիական նորմերի, աշխատանքային ռեժիմն ընդունվում է 260օր/տարի, օրվա մեջ մեկ անգամ՝ 8 ժամ տևողությամբ հերթափոխով:

Բացահանքը շահագործվելու է 3 փուլերով: Առաջին տասնամյակի համար տարեկան արտադրողականությունը կազմելու է 10000մ³ տուֆային զանգված, երկրորդ տասնամյակի համար՝ 20000մ³, իսկ վերջին 30 տարիների ընթացքում՝ 45000մ³:

Օգտակար հանածոյի որակական գնահատականը բավարարում է «ուղիղ ձևի կտրվածքի քարի» և «խճի ու ավազի» ստացման համար ԳՈՍՏ-երի տեխնիկական պահանջներին, և կատարված փորձնական հանույթի արդյունքում ուղիղ կտրվածքի պատքարի ելքը տուֆային զանգվածից կազմում է 40%: Ստացված տվյալների համաձայն, տեղամասի տուֆերից ստացված խիճը և ավազը կարող են օգտագործվել որպես թեթև լցանյութ:

Դիտարկումներով պարզվել է, որ ստորերկրյա ջրերը բացակայում են հորատանցքերում և շրջակայքում: Դա պայմանավորված է տեղամասի տարածքի երկրաբանական և գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով: Հաշվի առնելով տուֆերի բարձր ջրաթափանցելիությունը, բացահանք ներթափանցող մթնոլորտային տեղումներն արագ կենթարկվեն բնական դրենաժի:

Բացահանքի կողերում և հատակում բնամասերի տեսքով մնացող կորուստները կազմում են հաշվեկշռային պաշարների 12.0%-ը:

Հանքարդյունահանման աշխատանքները լրիվ հզորությամբ կազմակերպելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.

- բացահանքի հարավային մասից անցնող ավտոճանապարհից դեպի բացահանքի 1928.3մ նիշ ունեցող հորիզոն մոտեցող բնահողային ավտոճանապարհի կարգաբերում,
- 1928.3մ նիշ ունեցող հանքաստիճանից ապարների հեռացում,
- ջրհեռացման խրամի անցկացում,
- արտադրական և շրջադարձային հրապարակի կառուցում:

Մակաբացման ապարները ներկայացված են ճաքավորված տուֆերի(փուշտա) շերտով և 122000մ³ ծավալով:



Տեղամասը մշակվելու է բաց եղանակով, առանց հորատապայթեցման աշխատանքների:

Հանույթային աշխատանքները նախատեսված է կատարել ընդերկայնական միակողմանի, ցածրաստիճանային ընդգրկմամբ մշակման համակարգով: Արդյունահանման աշխատանքների ժամանակ հանքաստիճանի բարձրությունը լինելու է 0.42մ, մեքենայացված եղանակով՝ վերևից ներքև: Իսկ աշխատանքային հրապարակի անհրաժեշտ լայնությունը՝ 14.19մ:

Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները 1112000մ³ քանակով բաղկացած են ճաքավորված շերտից(փուշտա) և թափոններից: Արտաքին լցակույտը ձևավորվում է բացահանքի հյուսիս-արևմտյան եզրագծով, որտեղ կտեղափոխվի 572600մ³ ապար: Ընդունված է լցակույտաառաջացման բուլդոզերային եղանակը: Արտաքին լցակույտը կգբաղեցնի 6.0հա տարածք, որի առավելագույն բարձրությունը կլինի 10մ: 1903.1մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց իրականացվում է ներքին լցակույտաառաջացում:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Տեխնիկական ջրի ծախսը 1մ² ջրելու համար ընդունվում է 0.5 լիտր: Ջրահեռացման միջոցառումներ չեն նախատեսվում, որովհետև տարածքում գետնաջրերը բացակայում են, իսկ մթնոլորտային տեղումների մի մասը հեռանում է ինքնահոս կերպով, իսկ մյուս մասը՝ ներծծվում բացահանքի հատակի տուֆերի ճաքերի միջով:

Շրջակա միջավայրի պահպանության համար վնասակար ազդեցությունները նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- սարքավորումները թույլատրել աշխատանքի միայն դրանց արտանետման գազերում վնասակար նյութերի թույլատրելի պարունակություն ապահովելու դեպքում, որի համար որոշ մեքենաների վրա դրվում են զտիչ սարքեր,
- փոշեառաջացման վերացման համար կիրականացվի աշխատանքային հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի, ավտոճանապարհների պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- նավթամթերքները պահվում են բացահանքի արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում(բացօդյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն՝ ապահովելով թափված նավթամթերքների հոսքը դեպի հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալներն ու մասերը կհավաքվեն հատկացված առանձին տեղում և կհանձնվեն որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:

Խախտված տարածքների լեռնատեխնիկական վերականգնումը կկատարվի բացահանքում աշխատանքների ավարտից հետո, որի ընթացքում կիրականացվի նշված տարածքների մակերեսների հարթեցում(9.0հա): Այդ նպատակով անհրաժեշտ ծախսերի չափը հաշվվել է 1344.5 հազար դրամ: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված է տարեկան մասնահանել 150.0 հազար դրամ:

Ամփոփելով վերոշարադրյալը, նախատեսված մի շարք բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները:



Ն. Մարտիրոսյան



Մարտիրոսյան

:Իսկապես ղարմատոհ ավատատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ

ՆԱԿԱՅԵՎԱՏԵՒԻՏՅԱՆ

:Իսկապես ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ

Չարմատոհ ղարմատոհ

:Մարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ
վճարատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ ղարմատոհ